

Առուշ Առուշանյանի հետ՝ հանուն անվտանգ, միասնական, շենացող Գորիս համայնքի

Միբեյի՝ հայրենակիցներ,

2021թ. հոկտեմբերի 17-ին կանգնելու ենք մեր համայնքի ապագան սեփական ձեռքերով կերտելու լրջագույն պատասխանատվության առջև: Գորիս խոշորացված համայնքն իր աշխարհաքաղաքական դիրքով այսօր գտնվում է թշնամու անմիջական նշանառության տակ: Սյունիքն իր վրա է կրում երկրի պաշտպանության ու հուսալիության վահանը, նաև այն սահմանային գիծն է, որտեղ որոշվում են մեր պետականության լինելիությունը, ազգային արժանապատվությունը:

Այսօր ավելի քան երբևէ մեզ պետք է միասնություն ու համախմբում՝ մեր երկրի պաշտպանության հաստատման ու զարգացման համար: Ես հավատում եմ մեր չհանձնվող, չկոտրվող ու պայքարող տեսակին:

Միբեյի՝ հայրենակիցներ, 4 տարի է անցել այն օրից, երբ ձեր վստահությամբ ստանձնեցի մեր սիրելի համայնքի ղեկավարման գործը: Այս տարիների ընթացքում մեկ ընտանիքի սկզբունքով բոլորս մեր ջանքն ու եռանդը կենտրոնացրել էինք՝ հանուն Գորիս համայնքի առաջընթացի, հանուն նորանոր ձեռքբերումների ու նվաճումների:

Ես չեմ խոսի կարճ ժամանակում մեր կողմից կատարված բազմաթիվ աշխատանքների մասին, չեմ խոսի նաև հայրենիքի նկատմամբ ունեցած նվիրումի մասին, որովհետև ամեն իրիկնահացին բոլորդ ակնարկում եք այդ ամենը, որովհետև ինքներդ եք եղել քար դնողը, ծաղիկ ջրողը, ցուրտ գիշերներին սահման պահողը...

Համայնքի կողմից իմ բացակայությամբ ստեղծվել է «**Առուշ Առուշանյան դաշինքը**»: Շնորհակալ եմ՝ անուրաց սիրո ու վստահության համար: Հիմա էլ ինձ չկաշկանդող քաղաքական ճաղերի հետևից հորդորում եմ՝ գնալ ընտրության՝ հանուն արդարության վերահաստատման, հանուն գորիսեցու արժանապատիվ կյանքի ու բարօրության: Ես հավատում եմ մեր համայնքի բնակիչների ողջախոհությանը և վճռական պահերին ճիշտ որոշում կայացնելու ունակությանը:

Իմ և ձեր հպարտությունը չի կարող ընկճվել, որովհետև ես և դուք պայքարել ենք ոչ թե իշխանության համար, այլ՝ հայրենին ամբողջական ու երջանիկ տեսնելու կամեցողությամբ:

## Էջ 2

Գորիս խոշորացված համայնքում այս պահին բազմաթիվ ծրագրեր են իրականացվում, որոնք ուղղված են համայնքի ռազմավարական, տնտեսական, սոցիալական զարգացմանը:

### Հարթաշեն բնակավայր

- ❖ Խաղահրապարակի, պուրակի հիմնում
- ❖ Մանկապարտեզի հիմնում
- ❖ Առանձնատների կառուցման ընթացիկ ծրագիր

- ❖ Մանկական զարգացման կենտրոնի գործունեության շարունակականության ապահովում

#### Խնձորենկ բնակավայր

- ❖ Խմելու ջրի ապահովման ուղղությամբ նոր ջրատարի կառուցում
- ❖ Ոռոգման ցանցի անցկացում
- ❖ Լուսավորության ցանցի արդիականացում

#### Ներքին Խնձորենկ

- ❖ Ոռոգման ցանցի կառուցում՝ ծրագրային փուլ
- ❖ Խաղահրապարակի կառուցում
- ❖ Ներհամայնքային ճանապարհի բարեկարգում
- ❖ Լուսավորության արդիականացում
- ❖ Դաշտամիջյան ճանապարհների բարելավում

#### Որոտան բնակավայր

- ❖ Բազմաբնակարան շենքի հիմնանորոգում, բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովում
- ❖ Մանկապարտեզի հիմնում, աշխատանքները՝ ընթացիկ
- ❖ Գիշերային լուսավորության արդիականացում

#### Շուռնուխ բնակավայր

- ❖ Հենակետերի կառուցում
- ❖ Շուռնուխ - Գորիս ճանապարհի լուսավորության անցկացում
- ❖ Առանձնատների կառուցում, մեկը՝ ավարտված, երեքը՝ ընթացիկ
- ❖ Սոցիալական ծրագրերի իրականացում
- ❖ Բազմաբնակարան շենքի հիմնանորոգում
- ❖ Գյուղատնտեսական նշանակության ծրագրերի իրականացում
- ❖ Մանկապարտեզի հիմնման ծրագրի ընթացիկ աշխատանքներ
- ❖ Գիշերային լուսավորության արդիականացում. 90 տոկոս ծածկույթի ապահովում
- ❖ Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում
- ❖ Խմոցների կառուցում
- ❖ Դաշտամիջյան ճանապարհների բարելավում
- ❖ Հովվի կացարանի կառուցում
- ❖ Բաց մակատեղու կառուցում

#### Բարձրավան բնակավայր

- ❖ Մանկապարտեզի բացում
- ❖ Գիշերային լուսավորության արդիականացում
- ❖ Բարձրավան-Գորիս ճանապարհի բարեկարգում
- ❖ Խաղահրապարակի կառուցում

#### Քարահունջ բնակավայր

- ❖ Քարահունջից-Գորիս միջպետական ճանապարհի լուսավորության անցկացում
- ❖ Քարահունջի գլխավոր ճանապարհի լուսավորության անցկացում

❖ Գյուղտեխնիկայի համալրում՝ շարքացան, մամլիչ, խոտհնձիչ

### Վերիշեն բնակավայր

❖ Մանկապարտեզի վերակառուցում, կապիտալ վերանորոգում,

❖ Խմելու ջրի ջրատարի կառուցում

❖ Վերիշեն գյուղի արվեստների կենտրոնի բացում, հարակից այգու բարեկարգման, մոտեցող ճանապարհի ասֆալտապատման, շինարարական աշխատանքներ

### Ակներ բնակավայր

❖ Ակներ-Գորիս ճանապարհի վերակառուցում

❖ Ճանապարհների բարեկարգում

❖ Ակների վարչական շենքի տանիքի հիմնանորոգում

❖ Ծածկով մակատեղու կառուցում

### Գորիսում իրականացվող ընթացիկ ծրագրեր

✔ Գորիս համայնքի Արզումանյան փողոցի Սևյան նրբանցքի և Ավանգարդ 4-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքներ

✔ Միջհամայնքային ճանապարհների բարելավում

✔ Մաշտոցի փողոցից դեպի Դիտակետ անվանյալ տարածք մոտեցման ճանապարհի հիմնանորոգում

✔ Վարարակն գետի աջ հատվածի հիմնանորոգում՝ Գետափնյա փողոց, Դավիդ Բեկ-Գետափնյա խաչմերուկից մինչև Գարեգին Նժդեհ-Գետափնյա խաչմերուկ, Վարարակն գետի ձախ հատված՝ Գարեգին Նժդեհ-Գետափնյա խաչմերուկից մինչև Մակիչի փողոցի հետ հատվող հետիոտային կամուրջ, արտաքին լուսավորություն, հետիոտն և հեծանվային երթուղու ձևավորում հին և նոր Գորիս քաղաքի հատվածների միջև:

✔ Գորիս քաղաքի կենտրոնական մասի՝ Գուսան Աշոտ, Կոմիտաս, Մակիչի, Օրբելյանների, Մաշտոցի, Անկախության, Տաթևացու փողոցներում՝ ներառելով մայթերի և երթևեկելի հատվածների բարեկարգման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի բարելավման աշխատանքները:

✔ Արտաշեսյան փողոցի (Մամիկոնյան փողոցից մինչև Թումանյան փողոց 950 մ հատված) վերանորոգում և ասֆալտապատում

✔ Խաղահրապարակի կառուցում

✔ Նախակրթարանների շենքային պայմանների բարելավում, նոր գույքով համալրում

✔ Գյուղատնտեսական նշանակության ծրագրերի իրականացում

Մեր կողմից առաջարկվող ծրագրի հիմքում դրված է ԱՆՎՏԱՆԳ, ԱՐԴԱՐ, ԶԱՐԳԱՅՈՂ համայնք ունենալու տեսլականը:

Համայնքում առաջիկայում պլանավորվում է իրականացնել՝

## **Բարեկարգում**

- ❖ Փողոցների և մայրերի հիմնանորոգման ծրագրերի շարունակականության ապահովում
- ❖ Բազմաբնակարան շենքերի մուտքերի, բակերի վերանորոգման շարունակականության անապահովում
- ❖ Խաղահրապարակների կառուցման ծրագրերի շարունակականության ապահովում
  - ❖ Շարունակել արդիականացնել լուսավորության ծածկույթը
  - ❖ Շարունակել ստեղծել կանաչ պուրակներ, հիմնանորոգել այգիները

## **Քաղաքաշինություն**

- ❖ Բնակարանային պայմանների բարելավում, բնակարանաշինության ծրագրերի իրականացման շարունակության ապահովում
- ❖ Համայնքային ենթակառուցվածքների բարելավում
- ❖ Սանիտարական մաքրում և կանաչապատում

## **Սանիտարական մաքրում և կանաչապատում**

- ❖ Մաքրության և աղբահանության համալիր ծրագրի իրականացում
- ❖ Միջազգային չափանիշներին համապատասխան աղբահանում, փողոցների մաքրում և լվացում, ձնահավաք աշխատանքների արդյունավետ կազմակերպում, ներդրված մոդելների արդյունավետ կիրառում
- ❖ Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ընդլայնում

## **Տրանսպորտ**

- ❖ Ներհամայնքային տրանսպորտային ցանցի բարելավում
- ❖ Ծայրամասային փողոցներում երթուղային ցանցի ներդրում

## **Արտաքին լուսավորություն**

- ❖ Փողոցների լուսավորման գործընթացի շարունակական արդիականացում
- ❖ Համայնքի պատմամշակութային վայրերում գեղագիտական լուսավորության անցկացում

## **Կրթություն և սպորտ**

- ❖ Մանկապարտեզների ցանցի ընդլայնում
- ❖ Սպորտային խմբակներում և մարզադպրոցներում երեխաների ընդգրկվածության ընդլայնում
- ❖ Սպորտային նոր դահլիճների կառուցում
- ❖ Համայնքային ենթակառուցվածքային մշակութային հաստատությունների արդիականացում
- ❖ Մշակույթի տների, թանգարանների, արվեստի և երաժշտական դպրոցների, գրադարանների հիմնանորոգման ու բարեկարգման շարունակականության ապահովում

## **Զբոսաշրջություն**

- ❖ Զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավում
- ❖ Զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման շարունակականության ապահովում

## **Արտաքին կապեր**

- ❖ Գորիս-Վիեն քույր քաղաքների համագործակցության ընդլայնում, փոխգործակցության շարունակականության ապահովում
- ❖ Համատեղ իրականացվող ծրագրերի զարգացում
- ❖ Այլ քաղաքների հետ նոր հարաբերությունների և կապերի հաստատում
- ❖ Սփյուռքում ապրող գորիսեցիների համախմբում, ներգրավում համայնքի զարգացման ծրագրերում